և ստոյգ օրինակէ. յառաջարանութեամբ և խորագրութեամբ։ Այլ և յաղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն՝ արարեալ ծաղկաքաղ՝ և ետ գրել վասն աղօթից և արտասուաթոր պաղատանաց՝ միանձու եղբարց և պայծառ դեղօք ծաղկել և զարդարել. և հաւաքեաց ի մի տուփ. և եղ ի դուռն ծովապատ սուրբ Գէորգ Լմայ անապատին, յիշատակ անջինջ հոգոյ իւրոյ և ծնողացն և ամենայն ազգականացն։ Լի բերանով Աստուած ողորմի ասացէք իւրոյ հոգւոյն, և Աստուած ասացողացդ ողորմեսցի յիւր միւս անգամ (Վէց տող պապարապ յետոյ դարձեալ իր գրչէն) — Արդ՝ և ես տկարս և անիմաստ. թափուրս ամենայն բարեաց. մեղապարտ սուտ անուն Խալիֆայ գրիչս. երես անկեալ աղաչեմ զձեզ. որք հանդիպիք սմա ներեցէք և թողութիւն շնորհեցէք սիալանաց գրիս. քան զի կարն մեր այս է, այլ և Աստուած ողորմի ասացէք ինձ և ծնողաց իմոց և Աստուած ձեզ ողորմեսցի յիւր միւս անգամ գալստեանն ամէն»։

Զ. — Էջ 370ա ծաղկողին գրչէն, «Դարձեալ ի թվականիս Հայոց ՌՃԽ (1691). ամին, ես Վանեցի Գրիգոր երէցս սուրբ Պօղոսեցի ծաղկեցի ոսկով զսաղմոսարանս հանդերձ Նարեկաւ. քան զի ծաղկեալ էր յառաջագոյն՝ առանց ոսկոյ խստապինդ դեղագործութեամբ. այժմս վասն փափաքանաց Տէր Աւետիս կրօնաւորին ոսկեցի և կրկին դեղօք նկարեցի. բայց կարի դժուար էր վասն բ. պատճառի, մին կազմած էր և միւս այլ դեղագծեալ էր կապն զձեռս ոչ թողոյր խաղայր. և դեղն զոսկին կլանէր, և ես բազում աշխատութեան աշխատանօք ոսկեցի. թէ լաւ թէ վատ աւարտեցի. եթէ գտանիցէք ի սմա ինչ վայելչութիւն՝ Տեառն շնորհք, և թէ ոչ մի՛ մեղադրէք. զի բազում տեղիս՝ առաջին նկարեալ դեղն ո՛չ թողոյր որ քայլէր եաշմն, այլ կուրացուցանէր զոսկին. եթէ կամիք և արժանի համարիք՝ ասացէք Աստուած ողորմի և թէ ո՛չ՝ ողջ լերուք ի տէր ամէն»։

Է. — 374ը տգէտ նոտրգիր գրչէ մը, «Փիլայ ցորեան՝ հարիւր զուրուշ այժմ կու զընեմք, նեղ և անձուկ ճանապարհաւ տուն կու դարնեմք։ Դու ե շուրուշ հաց առնելով կու դրդրաս, իրրեւ ըզհաւ ձում ածելով կու կըոկռաս։ Ել տես այսօր ըզկիրս մեր անտանելի. թէ ոչ տէրն էր մեզ օգնեալ՝ չէր գտնալի»։

Անդ, քիչ մը տարբերող մելանով, կըրնայ վերինին շարունակութիւնն ալ սեպուիլ։ «Ես մեղաւոր Գրիգոր անուն իրր վարդապետ՝ որ լուսարար եւս անուանիմ (անրնրևռնեկի բառ մը) գրեցի զայս ձեզ թուին Ռ. վաթսուն ւ՝ երեք և երկերիւր՝ ի նոյն հաշիւ գիտել պարտիք (1814)»։

Ահա ասոնք են ձեռագրիս յիշատակարանները։ Ասոնցմէ կը ծանօթանանք Գրիչ Խալիֆայ Վանեցւոյն, որ ձեռագիրս գրած է. իսկ երկու ծաղկողներէն մէկուն անունը անծանօթ կը մնայ, իսկ երկրորդինը իր ինքնագիր յիշատակարանին շնորհիւ յայտնի է. Գրիգոր երէց Վանեցի։

Նախ երկու տողով կենսագրեմ գրիչը, որ արդիւնաւոր եղած է, մեզի թողլով ծանօթ չորս տարբեր ձեռագիրներ։

Խալիֆայ Գրիչ Վանեցի.

Իրմէ ձասած են Չեռագիրներ, որոնցմէ երկուքը ինձի ծանօթ են։ Ա. Սաղմոսարան մը, որուն յիշատակարանը, «Արդ գրեցաւ սա ՌՃԼԲ (= 1683) թվականիս ի Վան քաղաքի, ի դրունս սուրբ Վարդան զօրավարի, ձեռամբ մեղապարտ Խալիֆայի, և որք հանդիպիք սմա օգտութեամբ յիշեցէք ի միտս բարիս և ի հայցուածս զմեղաւոր սուտանուն Խալիփա գրիչս և զծնողքն իմ»։ Իսկ Բ. ձեռագիրը Աւետարան մը՝ որուն յիշատակարանը այս է. «Փառք և պատիւ... Արդ, գրեցաւ և աւարտեցաւ սուրբ աւետարանս յերկիրն Վասպուրական. որ այլ իմն ասի Վան. ընդ հովանեաւ սուրբ Վարդան զօրավարին (և) դատերն իւրոյ Շուշանայ. ի հայրապետութեան սրբոյ աթոռոյն Էջմիածնայ՝ տեառն Եղիազարին. և առաջնորդութեան սրբոյ ուխտին Վարագայ՝ կարապետ վարդապետին, և թագաւորութեան Իսմայէ-